



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 6 ՄԱՅԻՍ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 143

### ՈՂԲ ԵՒ ԶՂՋՈՒՄ

**Տ**էր, լսէ իմ աղօթքս, դուն՝ որ հաւատարիմ ես՝ ականջ դիր աղաչանքներուս, դուն՝ որ արդար ես՝ պատասխան տուր ինձի: Ես քու ծառադ եմ, զիս դատաստանի մի՛ ենթարկել, որովհետեւ չկայ կենդանի արարած մը որ քու դիմացդ արդարանայ: Թշնամին զիս հալածեց, կեանքս հողին հաւասարցուց, եւ զիս խաւար աշխարհին բնակիչ դարձուց, արդէն մեռած մարդոց պէս: Զոգիս խռովքի մէջ է, սիրտս կը սոսկայ: Կը յիշեմ անցեալ ժամանակները, կը խորհիմ քու բոլոր գործերուդ մասին, կը խոկամ ըրածներուդ մասին: Ձեռքերս քեզի կ'երկարեն օգնութեան համար. ծարաւ հողի պէս՝ հոգիս ծարաւ է քեզի: Շուտ ըրէ, Տէր, պատասխան տուր, հոգիս արդէն կը մարմնի, ինձմէ երես մի՛ դարձներ, մի՛ ձգեր որ ողջ-ողջ գերեզման իջնեմ: Ամէն առաւօտ ինձի սերդ լսել տուր, որովհետեւ ես քեզի վստահել եմ: Ահա քեզի կը դիմեմ, ցոյց տուր՝ ինչ ձեւով կ'ուզես որ ապրիմ: Տէր, ազատէ զիս թշնամիներէս, ես քեզ իմ ապաւէնս դարձուցի: Քու կամքդ կատարել սորվեցուր ինձի, որովհետեւ իմ Աստուածս ես դուն. քու բարի Զոգիդ զիս ուղիղ ճամբով թող առաջնորդէ: Տէր, քու անունդ փառաւորելու համար՝ ազատէ կեանքս. դուն՝ որ արդար ես, այս նեղութենէն դուրս բեր իմ անձս: Ինձի հանդէպ սերդ ցոյց տուր. թշնամիներս ոչնչացուր, բնացնջէ բոլոր անոնք որոնք ինձի նեղութիւն կու տան, որովհետեւ քու ծառադ եմ ես:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

## ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



### ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

4:13-31, 5:1-11

#### ՅՈՒՂԱՅ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՎ ՇՐՋԱՊԱՏՈՒԿ (4:13-18)

13 համարը կը պարկերացնէ թշնամիին գալու եղանակը, թէ ինչպիսի ուժգնութեամբ եւ վայրագութեամբ պիտի գայ: Բայց ինչպէս կարելի է ազատիլ այս վիճակէն: Միայն ապաշխարութեամբ եւ վերադարձ առ Աստուած: Միակ ճանապարհը՝ ապաշխարութիւն: Անոր համար ալ 14 համարը կ'ըսէ. «Ով Երուսաղէմ, սիրտդ չարութենէ լուս, որպէսզի փրկութիւն գտնես»: 15 համարը կը ներկայացնէ աշխարհագրական դիրքը թէ ուրկէ պիտի գայ թշնամին «Դանէն լուր եւ Եփրեմի լեռնէն թշուառութիւն լսել կու տայ», որոնք հիւսիսի շրջանը կը ներկայացնեն: Իսկ 18 համարը կու գայ ցոյց տալու թէ այս բոլորի պատճառը ուրիշ բան չէ եթէ ոչ իրենց ցանածը: Ժողովրդային բացարթութեամբ. «ինչ որ ցանես պիտի հնձես»: «Այս բաները քու ճամբաներդ ու գործերդ բերին քու վրադ. ասիկա քու չարութիւնդ է, որովհետեւ մինչեւ քու սիրտդ հասաւ»:

#### ԵՐԵՄԻԱՅԻ ՎԻՇՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ (4:19-22)

Մարգարէն երբեք անմասն չի նկատեր ինքզինք այս կացութենէն: Որովհետեւ մարգարէն միայն այն անձը չէ պարգամներ փոխանցող, այլ նաեւ այդ ժողովուրդի մէկ մասնակը: Անոր համար ալ լսելէ ու տեսնելէ ետք տրուած պարգամներն ու գալիք արհաւիրքները, ու անոնց ուժգնութիւնը, ինք ցաւ կը զգայ, եւ չի կրնար լուռ մնալ: Ընդհանրապէս Աստուածաշունչին մէջ այսպիսի ցաւեր կը նմացուի երկունքի ցաւի, որմէ յետոյ կայ նոր սկզբնաւորութիւնը: Արդէն այս վիճակը ոչ միայն սահամանային գիծերու վրայ, այլ հասած է մինչեւ քաղաքի կեդրոնը: Մարգարէն իր անձին օրինակով այդ մէկը ցոյց կու տայ. «Փորըս, փորըս, մինչեւ սրտիս շրեմարանները ցաւ կը զգամ»: Եւ ահա հարց կու տայ, թէ մինչեւ երբ այս վիճակը պիտի տեսնուի: Այս հարցումին դիմաց Աստուած կը պատասխանէ. «Իմ ժողովուրդս յիմար է, զիս չճանչցան. անոնք անմիտ գաւակներ են, անոնց քով հանճար չկայ. անոնք չարութիւն ընելու համար իմաստուն են, բայց բարութիւն ընել չեն գիտեր» 22 համար: Այնքան արեւն որ այս վիճակի մէջ են, այդպէս ալ պիտի մնան: Անոր համար ալ Աստուած վերադարձի, ապաշխարութեան կոչ կ'ուղղէ, որպէսզի փրկուին:

#### ԵՐԵՄԻԱՅԻ ԳԱԼԻՔ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՏԵՍԻԻՔԸ (4:22-31)

Զարմանալի համեմատութիւն մը կ'ընէ մարգարէն ըսելով. «Երկրին նայեցայ եւ ահա անձեւ ու պարապ էր. երկինքին նայեցայ ու լոյս չունէր» 23 հմր: Նոյնանման արտայայտութիւն կը գտնենք Ծննդոց գիրքին 1:1-2 մէջ, երբ կը ներկայացուի սրբազանութեան պարմութիւնը, ուր քառասային վիճակ կը փիրէր: Ահա գեղեցիկ խոստացում երկիրը, որ իբրեւ ժառանգութիւն տրուեցաւ Իսրայէլի ժողովուրդին, հիմա քառասային վիճակ է որ պիտի փիրէ: Այնպիսի ահաւոր վիճակ մը, որ նոյնիսկ լեռները կը դողային, բլուրները կը սարսէին, մարդ չկար, թռչունները փախած էին, եւ ամբողջ երկիրը անապատ դարձած: 24-26 հմր:

Այս ահաւոր կացութեան դիմաց, սակայն, տակաւին կայ յոյսի նշոյլ մը, որովհետեւ Տէրը կ'ըսէ. «Բոլոր երկիրը պիտի աւերուի, բայց բոլորովին աւերակ պիտի չընեն» 27 հմր: Այս վիճակին մէջ, ինչ ընել. շարժել թանձրախիտ անտառներ պիտի մտնեն ու ապառաժներու վրայ պիտի ելլեն: Կարծեք երթալու հոն ուր որ սովոր էին երթալու, այսինքն՝ պաշտամունքի վայրեր: Իսկ դուն, ով Իսրայէլ, որ կը նմանցէ պոռնիկի, իր հոմանիներուն երթալու անոնցմէ օգնութիւն խնդրելու, բայց ի գուր, որովհետեւ պիտի կոտորեն:

## ԵՐՈՒՄԱՂԷՄԻ ՄԵՂԶԸ (5:1-11)

Եթէ 4-րդ գլուխը յուսահատութեան վիճակ մըն էր որ փիռեց, որովհետեւ Տէրը յիշեցուց, որ ի գուր է վարահիլ հոմանիներուն: Ահա այդ յուսահատութեան դիմաց Տէրը շարունակելով Իր պարգամը, մարգարէին ճամբով, ցոյց կու տայ Իր ողորմութիւնն ու գութը, որ պարտասար է թողութիւն շնորհելու եթէ երբեք **մէկ հոգի կայ, որ իրաւունք ընող, ճշմարտութիւն փնտռող է** (1 հմր): Վիճակ մը, որ մեզ կը յիշեցնէ Սողոմ Գոմորի պարագան, բայց այս անգամ կարծէք շատ ատելի ծանր, որովհետեւ Սողոմ Գոմորի պարագային թիւր 10 էր:

Այս արքայայտութիւնը նախ յոյս կը ներշնչէ, որ Տէրը պարտասար է թողութիւն շնորհելու, ներելու, փրկելու: Երկրորդ, արդարի մը ներկայութիւնը ազդեցիկ է որ Տէրը փոխէ իր ծրագիրը: Քրիստոս պիտի ըսէ. «ընտրեալներուն համար այդ օրերը պիտի քիչնան» (Մտթ 24:22): Բայց արդեօք քիչ մը չափազանցուած չէ արքայայտութիւնը երբ կ'ըսէ. «մէկ հոգի եթէ կայ»: Անպայմանօրէն մէկ հոգի կար, փակաւին չըսելու համար քանի մը հոգիներ կային, բայց այսպէղ արքայայտութիւնը այն է ցոյց տալու, թէ քաղաքը ամբողջութեամբ արդէն անկեալ վիճակի մէջ է, համեմատաբար շատ ատելին են ամբարիշտները քան արդարները:

(2 հմր) Լեզուով կը դաւանին, բայց անոնց սիրտը հեռու է Աստուծմէ: **«Տէրը կենդանի է կ'ըսեն», բայց ստութեամբ երդում կ'ընեն:** Ինչպէս պիտի ըսէ Տէրը Եսայի մարգարէին ճամբով. **«Այս ժողովուրդը զիս շրթներովը կը պաշտէ, բայց անոր սիրտը ինձմէ հեռու է»** (29:13):

Տէրը քանի-քանի անգամներ, փարբեր ձեւերով փորձեց զիրենք դարձի բերել, ապաշխարութեան հրաւիրել, բայց անոնք մնացին անդրդուելի, ընդհակառակը, առաւել եւս իրենց սրտերը կարծրացուցին. **«Չանոնք ծեծեցիր, բայց ցաւ չզգացին, զանոնք հարցուցիր, բայց խրատ ընդունիլ չուզեցին, իրենց երեսը ատելի կարծրացուցին եւ դառնալ չուզեցին»** (3 հմր): Կը նշանակէ, յաճախ դէպքեր, պարահառներ առիթներ են զգաստութեան, անդրադարձի ու վերադարձի առ Աստուծմ: Բայց նաեւ նոյն դէպքերը կրնան պարճառ դառնալ մեր սրտերը ատելի կարծրացնելու եւ առաւել եւս Աստուծմէ հեռանալու: Պարճառը, խոնարհութեան պակասը:

Հերաբրբրական միջամտութիւն մըն է որ Երեմիա մարգարէն կ'ընէ, այս երեւոյթը վերագրելով անոնց փրկութեան, ուր անոնց Օրէնքի ուսուցիչները պէտք էր սորվեցնէին Աստուծոյ ճամբան, ու Անոր Օրէնքները. **«Անոնք աղքատ են, անմիտ են, Տիրոջ ճամբան ու Անոր Օրէնքը չեն գիտեր»** (4 հմր): Պօղոս Առաքեալ կ'ըսէ. **«Հաւարքը կու գայ լսելէն, լսելը Աստուծոյ խօսքին քարոզութենէն»** (Հռոմ 10: 17):

Եթէ երբեք ժողովուրդը փեղեակ չէ Աստուծոյ խօսքէն, որուն պարասխանապարտն Օրէնքի ուսուցիչներն են, ապա՝ մարգարէն անոնց կը դիմէ, որպէսզի անոնք իրենց պարտականութիւնը կատարեն, բայց արդէն մարգարէն կը յայտնէ, թէ անոնք ալ **«լուծը կոտորած են եւ կապերը փրցուցած»** (5 հմր), որոնց մեղքը շատ ատելի ծանր է, քան առաջինին: Ուրեմն, ո՛վ պիտի սորվեցնէ այս ժողովուրդին:

Ահա այս իսկ պարճառով թշնամին պիտի յարձակի: Այս համարին մէջ երեք փարբեր գիշարիչ, պարտառող կենդանիներ կը ներկայացուին, որոնք ցոյց կը տրուին թշնամիին վայրագ նկարագիրը, թէ ինչպիսին է. **«Անտառին առիւծը, անապատներուն գայլը եւ որպէս ինձ»** պարտասար է պարտաշելու, կործանելու իր որսը: Ինչո՞ւ այսքան ծանր, որովհետեւ. **«անոնց յանցանքները շարքան, ու անոնց ապարտաբարութիւնները բազմացան»** (6 հմր):

Աստուծոյ ըրած ուխտին ու հայրական հոգածութեան ու խնամքին դիմաց, անոնք, ընդհակառակը, զԱստուծմ լքեցին, ուրիշ աստուածներու երդում ըրին (7 հմր): Ահա այս ընելուն համար միթէ Տէրը. **«պիտի չպարժէ՞ կամ վրէժ պիտի չառնէ՞»** (9 հմր): Որովհետեւ անոնց փրկութիւնը արդարացում մը չէ այլեւս, ընդհակառակը անոնք շահագործեցին Աստուծոյ ողորմութիւնը:

Ահա Տէրը կը յայտարարէ. **«Անոր պարիսպներուն վրայ ելէք ու կործանեցէք, բայց ոչ բոլորովին»** (10 հմր): Ըստ Եսայի մարգարէի պարգամին Երուսաղէմը որպէս Աստուծոյ քաղաք պարիսպ ուներ, այսինքն Աստուծոյ պաշտպանութիւնը, բայց հիմա արդէն հասած է պահը, որ այդ պաշտպանութիւնը վերցուի եւ քաղաքը կործանուի, բայց ոչ բոլորովին: Կը նշանակէ փակաւին յոյսի նշոյլ մը կայ: Որովհետեւ ինչպէս իր որթապունկին ճիւղերը կը կտրեն, բայց անոր բունը կը մնայ, որպէսզի նոր ճիւղեր տա: Նոյնպէս ալ Աստուծոյ պարիժը Իսրայէլին, կործանեն, բայց ոչ բոլորովին: